

ցաւ այցելել յայտնի բարեգործ մեծ. պ. Աղէքսանդր Յ. Մանթաշեանցին, ուր հիւրասիրուեցաւ թէյով:

Պ. Ա. Մանթաշեանն այդ միջոցին յայտնեց Նորին Օծութեան, որ ինքը յանձն է առնում նորոգել ս. Էջմիածնի նուիրական Ցաճարը, ծախսելով նորա վերայ հարիւր յիսուն հազար ուսլի և արժանացաւ Աղղիս սրբազնագոյն Հովուապետի հայրական լիաբերան օրհնութեան:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ:

Ազգիս Վեհ. Հայրապետը կոնդակով մի մնայուն յանձնաժողով է նշանակել ս. Էջմիածնում, որին յանձնուած է տպարանի կառավարութիւնը, «Արարատի» խմբագրութիւնը, մատենադարանի ու թանգարանի կառավարութիւնն ու բարեկարգութիւնը և հոգեւոր գրքերի գրարձնութեան գործը:

Յանձնաժողովի նախագահն է Տ. Աշոտ վարդ. Հախեանը, որ և գրաքննիչ հոգեւոր գրոց, իսկ անդամներն են՝ Տ. Տ. Կարապետ, Մեսրոպ, Յուսիկ և Մամբրէ վարդապետներ և զւպիր Սպիրիդոն:

Յանձնաժողովը մշտական է և մէկի որ և է պատճառով լրացակայելու կամ պակասելու դէպքում՝ լրացնուում է Վեհ. Հայրապետի կողմից:

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՈՐ ՁԷՆՔԸ

Ներսիսեան Դպրոցի արդէ հոգաբարձութիւնը անցեալ Մարտ ամսին որոշել էր դպրոցի շէնքը կառուցանել Վանքի եկեղեցու հանդէպ գտնուած վանքապատկան ընդարձակ հրապարակի վրայ, որ ի Տ. հանգուցեալ Մատթէոս կաթուղիկոսը նուիրել էր Ներսիսեան Դպրոցին յատկապէս վրէժն ուսումնարան կառուցանելու նպատակով: Այժմեան հոգաբարձութիւնը շատ տեղեր որոնելուց յետոյ չգտաւ յարմարաւոր մի այլ գետին և որոշեց դարձեալ այդտեղը նախընտրել: Իւր այս որոշումը հոգաբարձութիւնը մի տեղեկագրով ներկայացրեց Վեհափառին և խնդրեց օրհնել այդ ձեռնարկութիւնը:

Նորին Ս. Օծութիւնը առ պիտի չհաճեցաւ թոյլատրել շէնքի կառուցումը, այլ մի կոնդակով առաջարկեց հոգաբարձութեան նախագահ Գեր. Տ. Գէորգ Արքեպիսկոպոս Սուրենեանին հրաւիրել Թիֆլիսի բաղաբաղիններից պ. պ. Աղ. Մանթաշեանին, Յ. Ալիխանեանին, ինժ. Ա. Բաբեանին, Գ. Դաւթեանին, բժ. Ա. Բաբայեանին, Պ. Քալանթարեանին և բժ. Կիրակոսեանին, որոնք հոգաբարձութեան հետ միասին խորհրդակ-

ցութեամբ պէտք է ընտրեն դպրոցի համար յարմարաւոր տեղ և իրանց վերջնական եղբակացութիւնը մատուցանեն Ա.Ե.Հ. Հայրապետի տնօրինութեան:

Ա.Ե.Հ.փառ Հայրապետը, ինչպէս մեզ հաղորդում են, առանձին կոնգակով պատուիրել է Ներսիսեան Դպրոցի Հոգաբարձութեան, տարեկան 300 ուսուրի ցկեանս թոշակ սահմանել պ. Նիկ. Տէր-Յարութիւնեանցին (Յարոյ), որ 14 տարի ֆրանսերէնի ուսուցիչ է եղել նոյն դպրոցում:

ԳՕԳՕԼԻ ԿԻՍՐԸՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԵՍԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Անցեալ տարի ամբողջ Ռուսաստանը մեծ հանդէսներով տօնեց ռուս ժողովրդի տաղանդաւոր զաւակներից մէկի, Գօգոյի, մահուան յիսնամեայ տարեդարձը: Թիֆլիսի քաղաքային վարչութիւնն էլ ըստ պատշաճին յաւերժացնելու համար ռուս նշանաւոր գրողի յիշատակը ի միջի պլոց որոշեց քաղաքի կենդրոններից մէկում կանգնեցնել Գօգոյի արձանը: Երբ արձանը պատրաստ էր արդէն, որոշուեց մարտի 19-ին հանդիսաւոր կերպով բանալ:

Մարտի 19-ը գրական մարդու փառաւոր յաղթանակն էր Թիֆլիսում: առաւօտուանից վաղ քաղաքի բոլոր միջնակարգ և ստորին կարգի դպրոցների աշակերտներն իրենց երաժշտական խմբերով և պարուած դրօշներով քաղաքի զանազան մասերից զիմում էին դէպի ռուսաց զինուորական նորակառոյց մայր եկեղեցին: զարնանային գեղեցիկ եղանակն էլ կարծես ուշում էր նպաստել հանդիսի շքեղութեանը: Ժամի 1-ին արդէն բոլոր վարչական բարձրաստիճան անձինք, քաղաքիս ներկայացուցիչները և համբարներն իրենց դրօշներով և տեղական երաժշտական խմբերով հաւաքուել էին զինուորական տաճարում: Տաճարում հոգեհանգիստ կատարուելուց յետոյ հանդիսականներն երաժշտական խմբերի նուագակցութեամբ ուղեորուեցան դէպի Ալէքսանդրեան պողո վերին մասը, որ այդ օրը փակուած լինելով՝ միմիայն հրաւիրուածները մուտք ունէին: Այդու ամբողջ վերին մասը զարդարուած էր կանաչով և դրօշներով: Կիսարձանը ծածկուած էր սպիտակ սաւանով: Բարձրաձայն կեցցէներով խլացնող հնչիւնների տակ արուեստագէտ Խոզոբովիչը—որին յանձնուած էր արձանի պատրաստութիւնը—վազադարձ յետ քաշեց և տասնեակ հազարաւոր աչքեր ուղղուեցին դէպի մեծ գրողի կիսարձանը: Կիսարձանը շինուած է դեղնապղնձից (բրօնձից) և դրուած է Գութայիսի կարմիր քարից շինած պատուանդանի վրայ, որի ստորին մասը դորշ քարից է: Պատուանդանին կպած է մի մետաղեայ պսակ զբոլով—պսակի